



ՀՀ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/

Հեռ. (Тел.)

« 04 » 07 2014 թ.

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ  
ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2014 թվականի հուլիսի 4 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ համային լսում: Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամներ,

գյուղապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բուժքույրը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ -- Արարատի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2014 թ. առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ

2014թ. առաջին կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 168 ընդունելություն:

Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 185 տեղեկանք, ստացել 71 - ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2014թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման ջրատարները, փողոցները: Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ :

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ընթացքի մեջ է համայնքի բնակիչներին բունաքիմիկատներով, և սերմերով ապահովելու հարցը:

2014թ.առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 1748.6 հազար դրամ.

բ / գույքահարկ որից՝ շենք և շինություններ, ավտոմեքենաներ – 977.3 հազար դրամ

գ / տեղական տուրք՝ 40.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 793.0 հազար դրամ

Համայնքում իրականացվել է մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել է հունվարի 28 – ը՝ ազգային բանակի օրը , նշվել է նաև ազգային ծխական տոներից 2 – ը՝ Տեառնընդառաջը և կանանց միջազգային օրը, մեծ շուքով նշվել է մայիսի 9- ը՝ հաղթանակի օրը և Շուշիի ազատագրման օրը, ինչպես նաև մայիսի 28-ը : Գեղեցիկ միջոցառումների շարք է կազմակերպվել երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1600.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 180.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 282.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 798.0 հազար դրամ.

Մասնակի բարեկարգվել է համայնքի գլխավոր փողոցը և գերեզմանատներ տանող 2 ճանապարհները.

2014թ I – ին կիսամյակում նախատեսված է կուլտուրայի տան բակի բարեկարգում և ծառատունկ, փողոցների մասնակի բարեկարգում, խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում և ջրատարերի մաքրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ